

ԱԷՏԱՐԵՐ



«ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳՈՆ» ԳՈՒԿ ԺԸ 46

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1901

ԹԻՒ 12

ԱՌԱՋԻՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մենք ընտանեցած ենք լսելու թէ մարդկրնայ մեռնիլ իր ընկերին ձեռքով: Ատելութիւնն ու նախանձը կամ ազահութիւնը մարդս կը գրգռեն առնել կեանքը զոր կարողութիւն չունին նորէն ետ դարձնելու: Գրեթէ ամէն օր օրական թերթերը կը պատմեն մէկ կամ աւելի մարդասպանութիւն, որ կը գործուին կ. պոլսոյ մէջ, և եթէ մէկ օրուան մէջ ամբողջ աշխարհի մէջ այսպէս սպաննուածներուն թիւը գրուի, ցանկը շատ երկար պիտի ըլլայ: Բայց առաջին մարդասպանութիւնը գործուեցաւ մարդկային սեռին պատմութեան սկիզբները: Եւ Աստուածաշունչը կը պատմէ թէ մարդասպանը և սպաննուողը եղբայրներ էին, մարդկային առաջին ընտանիքին անդամներ: Երբ Ազամ ու Եւա նայեցան իրենց որդւոյն անկենդան մարմնին վրայ, առաջուրէն աւելի աղէկ հասկցան թէ ինչպէս սոսկալի էր մեղքին չարքը զոր իրենք բերած էին աշխարհի մէջ: Այս չարիքներէն մէկն էր մահը որ երբեք պիտի չմտնէր մարդկային ընտանիքին մէջ եթէ մեղանշամ չըլլային իրենք: Եւ մեղքին այդ արմատը ինչ սոսկալի պատուը բերած է



պարտիմք աղօթել որ ջնջուի մեղքը: Կ'աղօթենք Աստուծոյ որ ջնջէ զանկա մեր սիրտերէն, որպէս զի պահուինք ոչ միայն մարդասպանութեան յանցանքէն, հապաբոլոր այն բաներէն որոնք ծուռ են և անսիրելի: Կ'աղօթենք նաև որ Աւետարանին քարոզութիւնովը և Սուրբ Հոգիին ներգործութիւնովը մեղքը յաղթուի աշխարհի մէջ, և մարդիկ ամէն տեղ սորվին զիրար սիրել իբրև եղբայրներ:

ՎԱՐՁԱՏՐՈՒՅՑՈՒՆ

Ասկէ ոչ շատ տարիներ առաջ ամառուան գեղեցիկ առաւօտ մը երկու վայրուն տղաք ծուռ կուգային նշանաւոր ամարաստանի մը մէկ

մեծ պանդոկին դիմացը գտնուած ծովեզերքը, Շուէտի հարաւային կողմը: Յանկարծ անոնցմէ մին կեցաւ, և շուտ մը ծուռով՝ աւազին մէջէն վերցուց մահիկաձև և աղամանդներով դարդարուած գեղեցիկ գնդաւոր մը: Զանկա վեր բռնելով գոչեց, «նայէ՛ Քարը, ինչ գտայ»: «Ինչ, Օթթօ», ըսաւ ընկերը, «ատոնք աղամանդ են, վատահամ թէ աղամանդ են, ինչու որ ուրիշ բան մը երբեք չըղջողար ատոնց պէս: Եւ հիմա չէ՞ որ հարուստ պիտի ըլլաս, ինչու որ շատ ստակ կրնաս ու-

մարդկային պատմութեան մէջ այդ ժամանակէն ի վեր: Մեր առաջին ծրնողքին ուրիշ առանձնայատկութիւնները կրնան անհետացած ըլլալ անոնց սերունդներուն մէջ, բայց մեղքին սկզբունքը հաստատապէս իջած է որդւոց յորդի անցեալ բոլոր դարերուն մէջ, և հիմա ողջ է և կը ներգործէ ինչպէս էր հազարաւոր տարիներ առաջ: Մարդասպանութիւնը մեղքին դառն պատուղներէն մէկն է միայն, և մենք

մեծ պանդոկին դիմացը գտնուած ծովեզերքը, Շուէտի հարաւային կողմը: Յանկարծ անոնցմէ մին կեցաւ, և շուտ մը ծուռով՝ աւազին մէջէն վերցուց մահիկաձև և աղամանդներով դարդարուած գեղեցիկ գնդաւոր մը: Զանկա վեր բռնելով գոչեց, «նայէ՛ Քարը, ինչ գտայ»: «Ինչ, Օթթօ», ըսաւ ընկերը, «ատոնք աղամանդ են, վատահամ թէ աղամանդ են, ինչու որ ուրիշ բան մը երբեք չըղջողար ատոնց պէս: Եւ հիմա չէ՞ որ հարուստ պիտի ըլլաս, ինչու որ շատ ստակ կրնաս ու-

նենալ ատոր պէս գնդասեղ մը ծախելով՝ «ինչո՞ւ, ֆարլ», ըսաւ Օթթօ զարմանալով: «Ի՞նչ ըսել կ'ուզես: Այս գնդասեղը իմն չէ: Տարակոյս չունիմ թէ ասիկա պանդոկին մէջ գտնուող մեծ տիկիններէն մէկունն է, և ես պիտի փնտռեմ ու գտնեմ անոր տէրը:» «Պարսպ խօսք, շահ մը չես ունենար, Կարելի է Շնորհակալ եմ՝ մը անգամ չպիտի լսես քու աշխատութեանդ փոխարէն, և ինքզինքդ նուաւստացած պիտի զգաս յետոյ, մտածելով թէ ի՞նչ յիմարութիւն բրիր:» պատասխանեց ֆարլ: «Վստահ եմ թէ ըրածս գովող խղճատանք մը բաւական վարձատրութիւն պիտի ըլլայ:» ըսաւ Օթթօ, «մինչև անգամ եթէ շնորհակալութիւն մը չընդունիմ իմ ըրածիս համար:»

Օթթօ անմիջապէս պանդոկ գնաց, և պանդոկապետին պատմեց բանը, և նոյն ատեն անոր ձեռքը յանձնեց մահիկաձև գնդասեղը «Ֆարլ» տղայ, բարի տղայ,՝ գոչեց պանդոկապետը: «Այո, տղաս այս գնդասեղը կորսընցընող տիկինը հիմա այս յարկին ներքև կը գտնուի: Կեցիք մինչև որ ասիկա անոր տանիմ, դիտեմ որ քեզ տեսնել պիտի ուզէ ան:»

Պանդոկապետը շուտով ետ դարձաւ, և տղան ճոխապէս կահաւորուած սրահ մը տարաւ, ուր փառաւոր տիկին մը կայնած՝ զանիկա ընդունելու կը սպասէր: «Շնորհակալ եմ քեզմէ, տղաս», ըսաւ տիկինը, «այս գնդասեղը ինձի վերադարձընելու համար, զոր շատ կը յարգեմ, իմացայ որ հայրդ մեռած է, բայց մայրդ տակաւին ողջ է, և թէ դուն բոլոր կրցածդ կ'ընես անոր օգնելու և ապրուստ ճարելու համար: Գնա անոր, և բո՛ւ թէ պատճառ ունի շատ պարծենալու իր տղին համար: Եւ դուն շուտով շնորհակալութիւններէ աւելի բանով մը պիտի վարձատրուես, ինչու որ Շուէտի թագուհին երբեք ապերախտ չէ:» Տղան գրեթէ կայծակնահար եղաւ և ապշած մնաց գտնելով ինքզինք թագուհին առջև և չկրցաւ պատասխան մը տալ: Միայն կրցաւ

ծուր խօնարհութիւն ընել և սրահէն դուրս ելլել: Այս գէպքէն քանի մը օր ետքը թագուհին և անոր հետեւորդները Սթոքհոլմ, Շուէտի մայրաքաղաքը, վերագարձան, և շաբաթ մը ետքը թագաւորէն հրատէր եկաւ Օթթօյի և անոր մօրը որ այդ քաղաքն ելլեման: Իսկոյն ճամբայ ելան, ու երբ հոն հասան, գտան գեղեցիկ տնակ մը իրենց համար պատրաստուած, և թագաւորին պատգամարեւն ըսաւ թէ ապագային մէջ ասիկա իրենց բնակարանը պիտի ըլլայ: Հետեւեալ օրը մայր ու սրբի պալատ հրաւիրուեցան և ներկայացան թագաւորին: Թագաւորին

ուած է: Անիկա Արևմտեան Յամաքին բարձրագոյն կատարն է, և բաց ի աշխարհիս ամէնէն բարձր լեռներուն, Հիմալայաներուն, քանի մը կատարներէն, աշխարհիս բարձրագոյն կատարը: Խորհեցէք եթէ ի՞նչ հազարամեթր երկայն ձող մը, որ ուղղահայեաց գիրքով կանգնուած ըլլայ, կամ, ինչպէս հեռաւորութիւնները կը չափուին ներսի գաւառներուն մէջ, երկու ժամուան հեռաւորութիւն: Ատոր գագաթը բաւական բարձր պիտի չըլլար ցուցնելու համար թէ Աքոնքալուայի կատարը ո՞րքան վեր է ծովուն մակերեսէն: Տարօրինակ բան մըն է որ այս



բարձր լեռը աշխարհագրութիւններուն մէջ դրուած չէր յիտուն տարի առաջ: Երբ յօդուածագիրս դպրոցական տղայ էր այդ ժամանակ, սորվեցաւ թէ Չիմպուրադօ և Սորաթօ Անտաններուն ամէնէն բարձր կատարներն են. բայց մենք, տղաքս, Աքոնքալուայի վրայով երբեք չլսեցինք: Անիկա կը բարձրանայ Չիլի և Արժանթին Հանրապետութեան սահմանալիսին վրայ, իբր 130 հազարամեթր հեռու վալիարայցօ քաղաքէն: Անոր կատարը եւրան 1896 ին Ամերիկացի Մր. Ֆիցճէրալտի առաջնորդութեան ներքև գտնուող խմբակին անդամներէն ոմանք, թէպէտ առաջնորդն ինք չյաջողեցաւ հասնել անոր գագաթը:

Որչափ որ գիտցուած է, այս է ամէնէն մեծ բարձրութիւնը որուն կարող եղած է մագլել երբեք ունէ լեռ ելլող մէկը: Մարդիկ աւելի բարձր ելած են օդապարիկներով, բայց օդանաւորները վեր կը տարուին առանց իրենց կողմանէ եղած աշխատութեան, մինչ այսպիսի անօտը միջոցորտի մը մէջ մագլելու աշխատութիւնը գրեթէ վեր է մարդկային ուժէ: Լեռ ելող յիշեալ խմբակէն ոմանց բերնէն արիւն եկաւ, և անոնց բազկերակը 130—140 անգամ կը զարնէր մէկ վայրկենի մէջ: Եւ ի՞նչ մեծ եղած ըլլալու է այն ոյժը որ երկար դարեր առաջ այսքան բարձրութեան հանեց այն ժայռը որմէ կը բաղկանայ յիշեալ լեռը:

ԱՔՈՆՔԱԿՈՒԱ

Այս հսկայ լեռան վերին մասը միայն կ'երևի այս պատկերին մէջ, որ լեռան վրայի բարձր մէկ կէտէն առնուած լուսանկարէ մը ընդօրինակ-

ԳՊՐՈՑԸ ՈՐՈՒՆ ՄԷՋ ՍՈՐՎԱԾ Է ՄԱՅՐԸ

«Մայրս կրթութեամբ աղէկ առիթներ չունեցաւ իր աղջիկներուն ատենը» ըսաւ աղջիկ մը որ երաժշտութեան դասեր կ'առնէ և շատ տկար Գաղղիբըն մը կը խօսի: Կրթութիւն է սոյս աղջիկը կը մոռնայ որ թէպէտ իր մայրը կանուխէն քիչ առիթներ ունեցած է, սակայն աւելի վերջերս շատ մը ունեցած է: Այս խեղճ և սխալ խորհող աղջիկը իրօք կը մտածէ թէ գիրքերու վրայ իր ունեցած քիչ մը ծանօթութիւնը և պատմութեան, լեզուներու և մաթեմատիքի վրայ քիչ մը գիտութիւնը շատ մը աւելի կրթութիւն են քան իր մօր այնչափ տարիներու մէջ առած կրթութիւնը: Վասն զի մայրը ուսումնասիրած էր կեանքը բոլոր կերպարանքներովը, և այն իմաստութիւնով որ փորձառութեան պտուղն է, տիրանալու այնպիսի բաներու որոնք ծածկուած են ամէն մարդոց աչքերէն բաց ի անոնց աչքերէն որոնք Աստուծոյ հետ կը քալեն: Այս աղջկան հայրը կրնար ըսել թէ տարի մը ինչպէս հիւանդացաւ ինք, և ստակ չկար վճարելու համար փոխ առնուած ստակին տոկոսը, և թէ մայրը ինչպէս կ'աշխատէր, և ժպտուն դէմք մը կը ցուցնէր իր աշխատած ժամանակը, և արի սիրտ մը կը կրէր, այնպէս որ չէր կորսնցներ իր քաջութիւնը: Երկրին ամէնէն ընտիր գոյէճէն ընդունուած վկայական մը չհաւատարիբ այդ մէկ տարուան մէջ ընդունուած կրթութեան: Բայց կը գտնուին շատ աղջիկներ որոնք կը խորհին թէ իրենց մայրէն աւելի գիտեն, ինչու որ իրենց քերականութիւնը քիչ մը աւելի շիտակ է և իրենք ծանօթութիւն ունին քանի մը բաներու վրայ, որոնց անտեղեակ է իրենց մայրը: Եթէ մեր աղջիկները կարող ըլլային անգամ մը տեսնել ցանկը այն ուսումներուն զորոնք սորված է իրենց մայրը, աւելի իմաստուն կրնային ըլլալ:

ՆԱԽԱՍՏԻՆԵՐՈՒ ԽԱՂ ՄԸ

Խաղ մը ս'ըջափ պարզ ըլլայ, այնչափ զուարճալի կ'ըլլայ ընդհանրապէս, և այդ է պատճառը թէ ինչո՞ւ ֆանատացի մը կը յանձնարարէ տեսակ մը խաղ, որ շատ ընդհանրացած է Բրիտանական Նաւատորմին մէջ: Առ ինք կամ տասը ոտք երկայնութիւն և հասարակ հեռագրական ձողի մը թանձրութիւն ունեցող ձող մը և

անոր երկու ծայրերն ալ հաստատէ: Ձողը ճիշդ այնքան բարձր թող ըլլայ որ մարդ գանիկա սրունքներուն մէջ տեղ առնելով վրան նստած ատենը ոտքերը գետնէն տաններկուքէն մինչև քանդուրս մատնաչափ բարձր ըլլան: Երկու մարդիկ ձի հեծնելու պէս նստեցուր ձողին վրայ երես երեսի, տուր անոնց բարձիկներ, և նշան մը տրուելուն պէս թող անոնք զարնեն իրարու: Երբ մէկը կ'իյնայ, կամ հարուած է մը և կամ հաստարակչու թիւնը կորսնցնելով վրիպող հարուածի մը պատճառով, կէտ մը կը նշանակուի իրեն դէմ եթէ հինգ երկվայրկեանի մէջ չկրնայ վերադառնալ իր հեծնելու գիրքին: Եթէ երկուքն ալ իյնան, կէտ չնշանակուի:

ՏԱՆԻՒՈ ԻՇԽԱՆ ԵՒ ՄԻԼԻՅԱ ԻՇԽԱՆՈՒՆԻ Առաջ Մոնթէնէկրոյի տիրողները ե...



պիսկոպոսներ կամ ճղնաւորներ էին և վլատիքա տիտղոսը կը կրէին: Որովհետեւ անոնք ամուրի մարդիկ էին, գաջը յաջորդական չէր, հապա տիրող եկեղեցականին մեռնելուն վրայ, նոյն ընտանիքէն երող ուրիշ մէկը յաջորդ կ'ընտրուէր: Տիրող առաջին աշխարհականն էր իշխան Տանիլո Ա., որ նոյն ընտանիքին կը պատկանէր, և անոր մահէն ետքը յաջորդեց անոր եղբորորդին, հիմակուան իշխանը, Նիքոլա, որ իր վաթսուներորդ տարիքը նոր լրացուց: Նիքոլա իշխան երեք մանչ և վեց աղջիկ ունի: Ամէնէն մեծ որդին և գահաժառանգն է Տանիլո իշխան, որուն պատկերը կը տեսնուի հոս: Տանիլո իշխան ծնաւ 1871 ին, և ամուսնացաւ 1899 ին Գերմանիոյ Մէքլենպուրկ Սթրէլիցի մեծ դուքսին աղջկան, Եուլթա իշխանուհիին, հետ, որ ծնաւ 1880 ին: Իշխանուհին իր ամուսնութեան ատեն Մոնթէնէկրոյի անունով Միլիցա կոչուե-

ցաւ: Տանիլո իշխանին քոյրերէն մէկը Խալիոյ թագուհին է, մէկը՝ Ռուս մեծ դուքսի մը կին է, ուրիշ երկու քոյրերն ամուսնացան տիրող գերդաստաններու անդամներու հետ, և երկուքը տակաւին ամուսնացած չեն: Կար ուրիշ քոյր մըն ալ, ամէնէն մեծը, կին Սերպիոյ գահուն թեկնածուն, Փեթեր Գարաեորկէվիչի, բայց մեռած է: Երբ իշխան Նիքոլա գահն ելաւ, ուրիշ ընտանիք մը կար որ կը փափաքէր տիրել, բայց իշխան Նիքոլա ամուսնացաւ այդ ընտանիքին մեծ աղջկան հետ, և այս միութիւնը լուծեց խնդիրը:

ԿԵՌԱՍ ՀԱՌԱՔԵԼ

«Այդ կեռաս հաւաքող երկու տղոց կերպին մէջ բաւական տարբերութիւն կայ» ըսաւ երկրագործը աչքը տնկելով կարմիր պտուղներով փայլող մատղաշ ծառերուն կողմը: «Այդ տղաքը իր միւսնոյն տարիքը ունին, և երկուքն ալ եռանդով կ'աշխատին կեռաս հաւաքելու գործին, բայց այդ զուարթ և ծիծաղկոտ տղան հինգ վեց տեղեր վազեց մինչ միւսը հանդարտ կեցած է իր տեղը: Լա գործող մըն է այդ հանդարտ տղան. կը հաւաքէ շարունակ և յարատեութեամբ, և բնաւ չփոխեր իր սանդուղին տեղը մինչև որ հաւաքէ ամէն մէկ կեռաս որ կը գտնուի իր մօտերը: Նոյնը պիտի տեսնէք յետոյ աշխարհի մէջ եթէ դիտէք այդ երկու տղաքը: Մէկը միշտ ասդին անդին պիտի վազէ լաւ առիթներ գտնելու համար, մինչ միւսը հանդարտ պիտի մնայ և իր սանդուղին մօտերը գտնուածները պիտի նայի հաւաքել, և ամէն ջանք պիտի ընէ շահիլ այդ դիրքին մէջ: Իր դիրքը կամաց կամաց պիտի փոխէ, և միայն այն ժամանակ երբ կը լնցնէ մօտը գտնուածները հաւաքելու գործը: Ամէն ջանք պիտի ընէ և շարունակէ այսպէս և իր կողմը պիտի լեցուի, մինչ միւսը տակաւին առիթներ կը փնտռէ:»

ՀՈՒՆՆԱԳՈՒՊԱՆՍՈՒ ՄԸ ՅՈՐԵԼՆԱՆԸ

Օրիորդ Պոթար, որ ծնաւ այն տանիւնը որ ծնաւ Վիլիթորիա թագուհին, վերջերս Պատուոյ Լէգէոնի խաչն ընդունեց իբրև վարձ վաթսուներորդ շարունակ ծառայելուն ի Սարիէթրիէր, անբուժելի ջլայնի ախտեր ունեցող կիներու հիւանդանոցին մէջ: 1840 ին հիւանդանոց մտաւ 12 ֆրանք ամսա-

կանով, իր համբաւ վաստկելէն քաւնրհինգ տարի առաջ: Հիւանդանոցին մէջ աշխատած վաթսուներկու տարուան միջոցին երկու անգամ միայն բացակայ գտնուած է. և այս երկու անգամուն ալ պատճառը փարիզի մէջ իր ճամբան կորսնցնելն եղած է: Անոր վարչական կարողութիւնը, և զարմանալի իշխանութիւնը հիւանդներուն վրայ, շուտով անոր դիրքը հիւանդանոցին մէջ՝ ամէնէն ճանձարալի դիրքէն խաղաղութեան և հանդարտութեան դիրքի մը փոխեցին: Անոր համար կը ըսուէր թէ մէկ աչքը գոց կը քնանար, և թէ ամէն ատեն առաջին հասնողը կ'ըլլար ուր իրեն պէտք կը կենար: Մարդասիրութիւնը չէր զանկա Սալիէթիէր գործ փնտռելու մղողը: Անոր շարժառիթն էր փախչիլ ազատուիլ բռնաւոր տիրուհիէ մը: Բայց երբ անգամ մը հիւանդանոց մտաւ, անոր ամէնէն մարդասիրական կերբերը դըրուեցան, և ինք մնաց հոն ի գործ դնելու այն գթութիւնն ու սիրտիչ հոգածութիւնը որ խաղաղութիւն բերաւ այնքան բազմաթիւ հիւանդներու: Ոչ ոք աւելի երջանիկ և գոհ կրնայ ըլլալ քան Սալիէթիէրի խոնարհ սպասաւորող հրեշտակը երբ Գաղղիոյ Նախագահը անոր կուրծքը կախեց ժապատէն: Օրիորդ Պոթար հիմա ութսունէ աւելի տարեկան ըլլալով, կը քաջուի գործուն ծառայութենէ, և փոքրիկ սենեակ մը պիտի ունենայ հիւանդանոցին մէջ հիմա, միմիայն տունը զոր գիտէ, և պզտիկ բայց իրեն բաւական ուժիկ մը: Հաճութեամբ չմտածեր իր այս մեկուսացումին վրայ, և կ'ըսէ թէ կը վախնայ որ այս բռնադատեալ անգործութիւնը իրեն մահը պիտի ըլլայ: Փառաւոր ընթացք — վաթսուներկու տարի ծառայել տառապեալ մարդկութեան համար: Եւ երբ բարի գործերու արձանագրութիւնը կարգադրուի, ո՞վ պիտի ըսէ թէ ամէնէն հպարտ ազնուականը աւելի բարձր տեղ պիտի գրաւէ քան Սալիէթիէրի խոնարհամիտ հիւանդապահը:

ՍԻՐՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Սիրուն պատմութիւն մը կը պատմուի հանրաժանօթ Գաղղիացի նկարիչի մը աղջկան վրայ: Այս պզտիկ աղջիկը իր աչքերուն տեսութիւնը կորսնցուցեր էր երբ շատ պզտիկ էր, և իր կուրուցիւնը անբուժելի կը համարուէր: Բայց փարիզ բնակող համբաւաւոր ակնարոյժ մը անոր աչքե-

րուն վրայ գործողութիւն մը կատարեց և տեսութիւնը նորէն շնորհուեցաւ: Աղջկան մայրը շատոնց մեռած էր, և հայրն էր անոր միակ բարեկամն ու ընկերը: Երբ անոր ըսուեցաւ թէ պիտի կրնայ բուժուիլ իր կուրուցիւնը, անոր միակ մտածութիւնն եղաւ թէ պիտի կարենար տեսնել իր հայրը. և երբ բարձրովն բուժուեցաւ և աչքին կապերը քակուեցան, հորը վազեց և գողալով շոշափեց անոր կերպարանքը, իր աչքերը երբեմն երբեմն գոցելով, իբր թէ վստահ ըլլալու համար թէ իրօք իր հայրն էր ան: Հայրը ազնիւ զըլուս մը և բարեձև կերպարանք մը ունէր, և աղջիկը անոր ամէն մէկ նայուածքը ու շարժումը դիտեց ամենամեծ բերկրութեամբ: Առաջին անգամն էր որ հորը գուրգուրանքն ու հոգածութիւնը իրական երեցաւ անոր: Եթէ հայրը գրկէր զանկա կամ մինչև անգամ անոր վրայ նայէր սիրով, անմիջապէս ուրախութեան արցունքներ կու գային աղջկան աչքերուն մէջ:

Աղջիկը հորը ձեռքը իր ձեռքին մէջ բռնելով աղաղակեց, «Ի՞նչպէս ունիմ եղեր ես այս հայրը այսչափ տարինս: Ի՞նչ ի վեր, և բնաւ չէի ճանչնար զանկա»:

ԻՆՁ ԿՈՒՁԷՐ ՑԵՂԱՊԵՏԸ

Սրտաշարժ էր Ափրիկեցի Լէհէզ ցեղապետին տրուած պատասխանը, երբ Տր. Մոֆթթ հարցուց անոր թէ կ'ուզէ որ միտինար մը Աստուծոյ ճամբաներուն վրայով տեղեկութիւն տայ իրեն և իր ժողովրդին: Ցեղապետը սպէս պատասխանեց շատ լուրջ կերպով. «Այո, եթէ միտինարը կրնայ ըսել ինձի թէ ի՞նչպէս կրնամ նորէն երիտասարդ ըլլալ»: Ո՛րքան դառն պիտի ըլլայ ձերութեան և տկարութեան գալը այնպիսի մէկուն մը վրայ որուն յոյսը այս աշխարհն է: Եւ սակայն ի՞նչպիսի երջանիկ անակնկալ մը եղած ըլլաւ է ձերունի ցեղապետին համար երբ սորվեցաւ թէ անմահական երիտասարդութիւնը իրենը պիտի ըլլար եթէ միայն ընդունէր Քրիստոսը: Մարդկային երիտասարդութիւնը կարելի է մէկ անգամ միայն ունենալ, և պիտի չմնայ, բայց անմահական երիտասարդութիւնը շարունակ կը տեւէ:

ՍՈՍԿԱԼԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ ՄԸ

Տրալիսի կենդանաբանական Պարտէզներուն ամէնէն շքեղ վագրերէն

մէկուն թաթին մէջ վերք մը ելած և ճիրանը (փէնչէ) տձեւացած էր, և կը վախցուէր թէ վերքը փտախտի պիտի փոխուէր: Տրալիսի Թրիսիթի Գուլէհի ուսուցիչներէն բժիշկ Պատ. Սամուէլ Նոթըն, հանրաժանօթ անձ մը իւրանտայի մայրաքաղաքին մէջ, ձեռնարկեց անոր թաթին վրայ վտանգաւոր գործողութեան փորձն ընել: Սոսկայի փորձ մըն էր անկա: Նախ վագրին էգ ընկերը կողմնական որչի մը մէջ փոխադրուեցաւ: Փրոֆ. Հոթընի հնարած ուղկանը վագրին վրայ ձգուեցաւ, և անկա առաջ քաշուեցաւ դէպ ի վանդակին դուռը: Այնուհետեւ չորս զօրաւոր պահապաններ բռնեցին տառապող և անհանդարտ կենդանիին ոտքը, և Փրոֆ. Հոթըն կտրեց հանեց ճիրանին արտաւոր մատը: Գազանը այս միջոցին կատաղութեամբ բայց պարապ տեղը կը ջանար անոր վրայ յարձակիլ, սակայն կատաղութիւնը էգ վագրին որ որջին վանդակսրմին ձողերուն մէջէն կը նայէր, աւելի շատ ահուելի էր տեսնողներուն: Անկա կը գոռար, կ'որոտար, և վայրագութիւնով պատերուն կը զարնուէր երթալու և իր ընկերը ազատելու համար ունեցած յիմարական բազմաթէն: Երբ էգ վագրը վանդակն ընդունուեցաւ իր ընկերոջ վերքին կապուելէն ետքը, վերջուց իր թաթը, քննեց զանկա սրտաշարժ գգուչութիւնով և յետոյ լզեց իր ընկերը ինչպէս կատու մը կը լզէ իր ձագերը, զանկա հանդարտեցնելու համար և այդ միջոցին մեղմիկ մը խռկալով: Բայց թերեւս գործին ամէնէն տարօրինակ մասն է անկէ ետեւ պատահածը: Շարժմը մը ետքը Փրոֆ. Հոթըն նորէն մտաւ կենդանաբանական Պարտէզը իր հիւանդը տեսնելու համար: Երբ կենդանին նշմարեց զանկան, սկսաւ խռկալ կատուի պէս, թոյլ տուաւ անոր քննել իր թաթը, և թուեցաւ թէ հաճոյք կը զգար անոր այսպէս ընելուն համար: Եւ անկէ ետքը տարիներով թէ՛ արու վագրը թէ՛ էգը շատ բարեկամութիւն և երախտագիտութիւն կը ցուցնէին Փրոֆ. Հոթընի:

Տարեկան բաժանորդագին 6 դահ. արծաթ կանխիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմէն Արտոնատէր Զ. Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Լ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
Ի ՑԱՐՍԻՆ ՈՒ ՅԱՌՈՐ ԳՕՍԱՅԱՆ
Ֆինանսներու Եղբայրու, Ամերիկան Խան